ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/09

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾՁԲ-19/18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից 16.04.2019թ. ներկայացված և 18.04.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/09 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 16.04.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾՁԲ-19/18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) հայտ ներկայացնելուց առաջ Ընկերությունը ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային համակարգի միջոցով ճշտել է Ընկերության հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունները: Մարտի 1-ի դրությամբ Ընկերությունը չուներ պարտավորություններ, ավելին՝ միասնական հաշվի վրա առկա էր 328 027 ՀՀ դրամի չափով գերավճար:

Նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 07.03.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, սակայն նույն հանձնաժողովի 18.03.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, այն հիմնավորմամբ, որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրված տեղեկանքում ներկայացված են ժամկետանց պարտավորություններ 17 000 ՀՀ դրամի չափով:

Ընկերության կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ այդ պարտավորությունները վերաբերում են «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված դրոշմանիշային վճարներին, որոնց մասին Ընկերությունը հարկային մարմնից որևէ իրազեկում չի ստացել:

Նույն ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել նաև, որ ՀՀ ՊԵԿ նախագահի 19.07.2017թ. թիվ 228-Ն հրամանի համաձայն սահմանված վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևում «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն նախատեսված չէ:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով, որ Ընկերության կողմից առաջարկված գինն ամենացածրն է, Ընկերությունը խնդրել է՝

1. Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել N 3 արձանագրության 3-րդ կետով ընկերության հայտը մերժելու մասին որոշումը.

2. Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում ընկերության հայտը բավարար գնահատելու մասին:

«Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.04.2019թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին սահմանված կարգով ներկայացրել է «ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԾՁԲ-19/18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.04.2019թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/09 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/09 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից Պատվիրատուի կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԾՁԲ-19/18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 01.03.2019թ. հայտ է ներկայացրել «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***1 500 000 ՀՀ դրամ***:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.03.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 14.03.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 17 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից 16.04.2019թ.-ի ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, Ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:***

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) պարբերության համաձայն՝ հարկային եկամուտներն են՝ դրոշմանիշային վճարները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված

պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: ***Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:*** Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից Պատվիրատուի կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾՁԲ-19/18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 01.03.2019թ. հայտ է

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կազմակերպված «ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾՁԲ-19/18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով ***01.03.2019թ.*** հայտ ներկայացրած «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.03.2019թ. ժամը 11:00-ի նիստի

թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերության մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է ***1 500 000 ՀՀ դրամ գումար***:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է, հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից Կարգի 44-րդ կետի հիման վրա 14.03.2019թ. տրամադրված եզրակացությունը, համաձայն որի՝ ***«Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված գնային առաջարկի մինչև մեկ տոկոսի շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն (17 000 ՀՀ դրամ), մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:***

Այսպիսով՝ Կարգի 44-րդ կետը սահմանում է, որ եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած ***հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:***

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է իրականությանը չհամապատասխանող, քանի որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

Նման դեպքերում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, գործել է իրավաչափ և առաջնորդվել Կարգի 44-րդ կետի պահանջներով:

Ընկերությունը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքով ներկայացրել է 01.03.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության՝ որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտի քաղվածք, որում արտացոլված չէ դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունը: Միաժամանակ ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.04.2019թ. տրված թիվ 1056 տեղեկանքը, առ այն, որ 01.03.2019թ. դրությամբ Ընկերությունը ունի 17000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարի մասով պարտավորություն:

Վերոգրյալով պայմանավորված հայտնում եմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությամբ հայտնել է, որ ՊԵԿ «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի» «Հարկային պարտավորություններ» բաժնում 2018թ. նոյեմբեր ամսից տեղադրված է հետևյալ հաղորդագրությունը՝

«Սույն քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին»:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ համաձայն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն դրոշմանիշային վճարը ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որը «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա հանդիսանում է հարկային եկամուտ և հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ

հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից 16.04.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**